

ԿՐՕՆԱԿԱՆ

Ո՞Վ Է ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

Քրիստոնեայ է այն մարդը,
 Որ արդարամիտ է ամէնուն հանդէպ,
 Որ անիրաւութիւն չ'ընէր,
 Որ ազահուծիւն չ'ընէր,
 Որ մէկ չորցած ճիւղի համար ծառը արմատէն չի կտրեր,
 Որ վարդը չ'արհամարհէր անոր ունեցած փուշերուն պատճառաւ,
 Որ բարձրագոյնը նուաստագոյնին չի դռհէր,
 Որ իր կեանքին համար կ'ընտրէ լայնահորիզոն վերելքի ճամբան,
 Որ զոգութիւն չ'ընէր,
 Որ իրեն վստահուած գաղտնիքը չի հրապարակեր,
 Որ իր հոգիի քաղցր գինին չի փոխեր դառն քաջախի,
 Որ ծառան չի դառնար դրամի, այլ տիրաբար կը գործածէ զայն բա-
 րի նպատակներու,
 Որ իրեն տրուած բարիքներուն հանդէպ երախտագիտութիւն կը
 ցուցնէ,
 Որ անմեղները չի զրպարտեր,
 Որ տիեզերքի վեհութեան հանդէպ հիացում, եւ բնութեան գեղեցկու-
 թեան հանդէպ սէր ունի,
 Որ նուիրական բաները թեթեւութեամբ չ'անարգեր,
 Որ զիտէ իր Ժամերը առաւելագոյն չափով օգտակար եւ հաճելի դար-
 ձընել,
 Որ պատկառանքով կը կենայ բնութիւնը վարող օրէնքներուն ցու-
 ցադրած իմաստութեան դիմաց,
 Որ միշտ զէպի լաւագոյնը կը ձգտի,
 Որ իր լեզուով մարդ չի վիրաւորեր,
 Որ մարդ չի խաբեր,
 Որ կը յարգէ իր խոստումը,
 Որ խարդախութիւն չ'ընէր,
 Որ իր խղճին ձայնը լռութեան չի դատապարտեր,
 Որ ուրիշներուն իրմէ առաջ տնկած արդիւնաւէտ ծառերը կը խնամէ,
 Որ խղճամիտ է,
 Որ կը ծառայէ իր ընկեր մարդուն,
 Որ չարամիտ ծաղրանքով իր նմանները չի վշտացներ,
 Որ իր օրերը ծուլութեամբ ի դուր չի վատնէր,
 Որ իրաւունքը կաշառքին չի զոհէր,
 Որ կեղծաւորութիւն չ'ընէր,

Որ չի փակեր իր աչքերը՝ փաստելու համար թէ աշխարհի մէջ լոյս
 դոյութիւն չունի,

Որ հրաշքի կարօտ չէ,

Որ հանրութեան չափը կը դերադասէ իր անձնական չափն,

Որ համբերատար է,

Որ հաւատարիմ է,

Որ իր հոգին իր մարմինին ծառայ չ'ընէր,

Որ ուրիշներու դորձին անտեղի միջամտութիւն չի կատարեր,

Որ չի հայհոյեր,

Որ իր նեղ օրերուն չի յուսահատիր,

Որ կ'ընդունի իր յանցանքը,

Որ ուրիշներու յանցանքներուն ետին չ'ապաստանիր,

Որ յոռետես չէ,

Որ յօնք չ'ինելու յաւակնութեամբ աչք հանելու սխալը չի գործեր,

Որ իր սրտին մէջ նախանձ չի սնուցաներ,

Որ առատութեան մէջ չի շուայտանար,

Որ ուրիշներու բարեյակջող գործերը տեսնելով կ'ուրախանայ,

Որ սրկրամոլութիւն չ'ընէր,

Որ կը նախընտրէ ուղիղ քանակը ծուռ քանակէն,

Որ չարախօսութիւն չ'ընէր մարդոց մասին,

Որ իր ականջները չի բանար բամբասանքի առջեւ,

Որ կը խորշի ամէն տեսակ չափազանցութիւններէ,

Որ իր ունեցածէն բաժին կը հանէ չունեցողներուն,

Որ չարագործներուն չի միանար,

Որ չբռնկանքներ չի կարկատեր իր յանցանքները մրայէն նետելու
 համար,

Որ երկու չափ եւ երկու կշիռ չի գործածեր,

Որ իր պարտականութիւնները չ'անտեսեր,

Որ իր առաւելութիւններով չի պարծենար,

Որ պատիւը չի փոխեր փառքի հետ,

Որ ստախօսութիւնը կ'ատէ,

Որ կը ջանայ սիրտին լացողը,

Որ մնաստար մարդերը չի քաջալերեր,

Որ իր ունեցած տաղանդը կ'արժեւորէ յիուսի,

Որ չի տրանջեր իր տաղանդին տարողութեան դէմ,

Որ լոկ ի ցոյցս մարդկան չի կատարեր իր գործերը,

Որ չար ցանկութիւններ չի սնուցաներ,

Որ քուրթեան խօսքերով մէկը միւսին դէմ չի թշնամացներ,

Որ կ'օգնէ իր ընկեր մարդուն,

Որ իր բերանը օրհնութեամբ կը բանայ:

Ն. ԱՐԲԵՊՍ.